



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՄԱՐՏ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստասիրներն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստասիրներն վերաբար խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ վիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 94

ԱՍՏՈՒԱԾ ԲՈՂՈՐԻՆ ԴԱՏԱԻՈՐԸ

Արդարահատոյց Աստուած, դուն՝ Տէր, արդարահատոյց Աստուած,
 ցոյց տուր արդարութիւնդ:
 Ել, ով Դատաւոր ամբողջ աշխարհի,
 ամբարտաւան մարդոց հատուցանէ արժանիք:
 Մինչեւ ե՞րբ, Տէր, մինչեւ ե՞րբ ամբարիշտները պիտի յոխորտան,
 չարագործները գոռոզ խօսեցնով պիտի արտայայտուին,
 եւ իրենց չարիքներով պիտի հպարտանան:
 Քու ժողովուրդդ կը նզմեն, ո՛վ Տէր, կը չարչարեն բեզի պատկանողները,
 այրիներն ու պանդուխտները կը սպաննեն,
 եւ որբերը կը կոտորեն, ըսելով.–
 «Տէրը չի տեսներ, մեր հայրերուն Աստուածը,
 այս բաներուն ուշադրութիւն չի դարձներ»:
 Յիմար մարդիկ, հասկցէ՛ք, դու՛ք՝ անմիտներ, ե՞րբ պիտի սորվի՛ք:
 Ան՝ որ ականջը ստեղծեց՝ ին՛ք չի՞ լսեր, ան՝ որ աչքը գոյացուց՝ ին՛ք չի՞ տեսներ:
 Ան՝ որ ազգերը կը սաստէ եւ իր գիտութեան մէջ կը դաստիարակէ՛
 նաեւ զանոնք պիտի չդատապարտէ՞:
 Տէրը գիտէ ինչ որ մարդիկ կը խորհին, եւ անոնց խորհուրդներուն ոչնչութիւն ըլլալը:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՂՈՐՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
 աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,
 ի նարիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



ՏԱՄԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ (20:13)

Պապուիրանը կը շարունակուի: Վեցերորդ պապուիրան.

«Սպանություն մի՛ ըներ»: Անցեալ անգամ փորձեցինք րեսնել որ պապուիրանները թիով 10 երկու հաւասար մասի կը բաժնուին Աստուծոյ վերաբերող բաժին եւ մարդոց վերաբերող բաժին: Հակառակ այս խմբաւորումին, սակայն, եթէ յիշենք Յովսէփի պարագան, երբ Պեղափրէսի կինը զինք փորձութեան պիտի մարներ, Յովսէփի այսպէս կ'արտայայտուի. «Քաւ լիցի որ ես Աստուծոյ դէմ այսպիսի մեղք գործեմ»: Սա կը նշանակէ, որ մարդուն ուղղուած յանցանքները նաեւ ուղղուած են Աստուծոյ: Քրիստոս նոյնը պիտի ըսէր. «ինչ որ այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք, ինձի ըրած եղած» (Մատթ 25:40): Ուրեմն, մնացեալ հինգ պապուիրանները, որոնք ուղղուած են մարդուն, եւ միեւնոյն արեւն նաեւ Աստուծոյ: Սա կը նշանակէ, օրէնքին զանցառութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ դէմ մեղանշում:

«Սպանություն մի՛ ըներ»: Նախ պահ մը անդրադառնանք այս բառին, կամ այս արարաքի դրդապատճառին կամ անոր արմարը, ուրիշ բան չէ եթէ ոչ պրելուիւթիւն: Սպանութեան պարագային կարելի է երկու երեսներով ըմբռնել. մարմնական եւ հոգեւոր: Մարմնական իմաստով կեանքը խլել կը նշանակէ, իսկ հոգեւոր իմաստով մէկու մը գայթակղութեան պատճառ ըլլալ, անձը հեռացնելով Աստուծմէ, րկարացնելով գայն իր հաւարքին մէջ, այն արեւն անոր հոգին սպաննած կ'ըլլանք: Այլ խօսքով, ինչպէս որ մարդ կը մեռնի մարմնապէս, սակայն, անոր հոգին կ'ապրի, դրախտի կամ դժոխքի մէջ, նոյնպէս ալ ոմանք կ'ապրին մարմնապէս, բայց մեռած է անոնց հոգին, Աստուծոյ հետ իրենց կապը կորուած է: Անոր համար ալ Աստուածաշունչը մեզի կը ներկայացնէ երկու րեսակի մահ մարմնաւոր եւ հոգեւոր: Այդ հոգեւոր մահուան օրինակը մենք կը րեսնենք Աստուածաշունչին մէջ Ծննդոց երրորդ գլխուն մէջ երբ Աստուծոյ պապուիրանը զանց ըրին, եւ կերան այդ պրուղը, որուն համար ըսուած էր. «այն պահուն որ ուրես անշուշտ պիտի մեռնիս» (Ծննդ 2:17): Բայց արդեօք մեռա՞ւ, խորքին մէջ Ֆիզիքական մահ անմիջապէս չունեցաւ, բայց հոգեւոր մահը ճաշակեց, կորուելով Աստուծոյ հետ հաղորդակցութենէն: Մէկ այլ ուրիշ օրինակ անառակ որդիին առակը, երբ կը վերադառնայ հայրը կ'ըսէ. «Այս գաւախ մեռած էր ողջնցաւ»:

Մարմնին սպանութիւնը Աստուծոյ ծրագրին դէմ ըմբռնութիւն է: Որովհետեւ Աստուած ամէն բանի ժամանակը ճշդած է, իսկ սպանողը այդ րրուած ժամանակն է որ կը կրճարէ իր արարքով, թէեւ Աստուծոյ վերջնական ծրագիրը ոչ ոք կրնայ խանգարել, բայց եւ այնպէս ոքնձգութիւն կարելի չէ սեպել: Սակայն, հոգեւոր մահը աւելի սուկալի է, որովհետեւ մարմինը սպաննելով կրնայ պարահիլ որ հոգին փրկուի, մինչ հոգեւոր մահուան պարագային հոգին յախրենապէս կ'անջարէ Աստուծոյ, եթէ դարձի չգայ եւ չդարմանուի այս աշխարհի վրայ: Քրիստոս նմանօրինակ արտայայտութեամբ պիտի ըսէ. «Մի վախնաք անոնցմէ որոնք միայն մարմինը կը սպաննեն, այլ վախցէք անկէ որ հոգին գեհենի արժանի կը դարձնէ»:

Հետեւաբար, ինչպէս նախորդող պապուիրաններու պարագային, այսպէղ եւս Աստուծոյ դիպումը այս պապուիրանէն՝ մակերեսային, արարաքին եւ խիտ ըմբռնումով պէրք չէ հասկնալ: Անոր համար Քրիստոս եկաւ այդ պապուիրաններուն խորքը բացարելու, նպարակը յայտնելու: Որովհետեւ մարդկային դարասարանը կրնայ պարժել առաջին պարագային մէջ գրնուող մեղապարքը, մարմնապէս սպաննողը, բայց չի կրնար պարժել գայթակղութիւն պատճառողը, եւ ի վերջոյ կարելորը Աստուծոյ դարասարանն է եւ ոչ մարդոց (Մատթ 10:28, Ղուկ 12:4-5): Նաեւ, մարդկային դարասարան մը կրնայ պարժել մարդասպան մը, եւ սակայն, ան կրնայ արդար նկարուիլ Աստուծոյ հայեցակէրով: Մարդասպան մը կրնայ գղջալ եւ ապաշխարել, բայց մարդկային օրէնքը անպարք չի կրնար սեպել գայն, չարդարացներ, ընդհակառակը մահապարիժ ալ կրնայ րալ, ինչպէս Յիսուսի աջ կողմը խաչուած ոճրագործը, որ մարդոց կողմէ մահուան դարասարարուած, եւ երբ գղջաց Աստուած գայն երկինքի արժանացուց, հակառակ այն իրողութեան որ մարդկային դարասարանը չնրեց, այլ խաչեց: